

Հ. Ա. Լ. Ի. Շ. Ա. Ն.

ԱՌ.

Ի. Ի. Բ. Ա. Շ. Ա. Կ. Ե. Բ. Տ. Ա.

Մեն Նահապետը իր գրական հսկայ գործունեութեան շրջանին՝ ճանչցուած ու մեծարուած է Ազգէս նաև իբրև Դաստիարակ:

Բայց մենք պիտի չիշխենք հոս մանրամասնութեանց՝ անոր կրթական պաշտօններուն շուրջ, որոնց մասին արդէն բաւարար գոհացում պիտի գտնէ մեր ընթերցողը Հ. Ալիշանի Կենսագրութեան մէջ¹:

Կ'ուզենք միայն նկատել զՀ. Ալիշան՝ իբր ուսուցիչ ու տեսուչ փարիզու Մուրատեան վարժարանին մէջ:

Վենետիկոյ Ռափայէլեան վարժարանէն կը մեկնի Գաղղիոյ Մայրաքաղաքը 1858 մայիս 10-ին, աշ բազուկն ըլլալու Հ. Ռափայէլ Թրեանցի՝ որ արդէն քաջ դաստիարակի համբաւն ունէր: Նոր օգնականին զալուստը նորագոյն խանդ ու կորով կը ներշնչէ աշակերտաց, ու նոյն իսկ կը սկսին աւելնալ ցայտուն կարողութեամբ օժտուած աշակերտներ ևս: Պահ մը կ'ընդմիջուի սա. կայն այս ուրախ ու վառվռուն շրջանը, որովհետև քիչ ամիսներ վերջ Թրեանց կը վախճանի անողոք հիւանդութեամբ մը և սգաւոր թախիծով կը լեցուի վարժարանը:

Միաբանութիւնը հանգուցեալ տեսչին իբրև արժանաւոր յաջորդ կը կարգէ այնուհետև զՀ. Ալիշան, որ այն ինչ կը ստանձնէ Տեսչութեան պաշտօնը՝ շատ աւելի մեծ եռանդով կը նուիրուի աշակերտաց զարգացման գործին: Միանգամայն մեծ համակրութեան առարկայ կը դառնայ վարժարանը՝ օտարներու և ազգայիններու առջև՝ Հ. Ալիշանի մշակած ու գործադրած ուսումնական ընտիր ծրագիրներով և կազմակերպած ակադեմական հանդէսներով: Սաներէն ոմանք, Ռափայէլեան վարժարանէն սկսեալ, արդէն յաջողած էին Ալիշանի տաղանդաշատ մտքի ըզրքէն օգտուիլ և ապա ձեռնալ բանասէր ու բանաստեղծ, նկարիչ ու երաժիշտ, ինչպէս թովմաս Թերզեան, Մկրտիչ Աճէմեան, Մկր. փորթուզալ փաշա, Գակոբ Թովմասեան, Գակոբ Տամատեան, Մկրտիչ Լիմոնճեան և ուրիշներ:

Հ. Ալիշան Մուրատեան վարժարանի Տեսչութիւնը կը վարէ մինչև 1861 Օգոստոս. անկէ վերջ կը հրաւիրուի ի Ս. Ղազար կարեւորագոյն գործի մը՝ Միխիթրեան Ուխտին ապագայ մշականեր պատրաստելու պաշտօնին:

Թէ՛ իրքան սքռաշարժ եղած է Հ. Ալիշանի համար փարիզի իր սաներէն անջատումը, և թէ՛ իրքան նուրբ և ազնուագոյն թելով միաւորուած են երկուստեք սրտելը՝ պիտի տեսնեն ընթերցողք անխոնջ դաստիարակին ունեցած հետագայ անտիպ թղթակցութենէն: Անոնք գողտրիկ ու մտերմիկ ու սիրունիկ ռոճով գրուած գոհար նամակներ են, որոնք ցայսօր իբրև մասունքներ պահուած էին Միաբանութեանս երեցագոյն Հայրերէն ոմանց քով:

Ուրախ ենք որ անոնք՝ Ազգիս Նահապետին մահուան 25 ամեակին առթիւ՝ գեղեցկօրէն կը զարդարեն անոր Յիշատակին նուիրուած «Բազմավէպ»-ի այս էջերը:

Հ. Ղ. ՏԱՅՆԱՆ

1. Երեմեմ Հ. Ս. Կենս. Հ. Ալիշանի. Վենետիկ, 1902:

Ճինեւայի լճին մէջ 5 Նոյ. [18]61

Իմ Սիրելի և հոգեսուն Որդեակը

Այս գրիս գծուելուն տեղն բաւական պիտի ըլլայ իմացընելու Ձեզի միտքս և յիշատակս, զոր պէտք չէ այլ բացատրել: — Իսկ ժամանակս է ձեր ժամը Յ' / լին հանգստեան ատենը. Պ. Մկրտիչն և ես շոգենաւու մը մէջ Ճինեւայի լճին երկայնութեան կէսն հասեր ենք, իր հարաւային կողմը, որ հիմայ գաղղիացւոց ձեռքն է, երկու տարի առաջ՝ Սարտենեաց:

Ազգարար փողը կը սուլէ. հասանք ի թոնոն աւան, այսինքն մօտեցանք անոր ափանց. ուսկից դարձեալ հեռանալով երկու ժամ այլ պիտի նաւենք և հասնինք մեր նաւահանգիստը. անկից շոգեկառօց պիտի երթանք ի Սիոն, անկից ալ ձիավար կառօց դէպ յիտալիա: — Սպիտակ լերին (մոն Պլան) լայնածաւալ գլուխն քանի մը անգամ տեսանք, և զՁեզ ալ հոն հանեցի, ուրիշ պտըտած տեղուանքս ալ մէկտեղ էք: — Այսչափս բաւական ըլլայ: Աղօթելով և ձեր աղօթիցն այլ յուսալով, երթամ և Զիամ Սիրելեացդ իմոց հայրական գրկօց

Հ. ՂԵՌՆԵ Մ. ԱՆԿԱՆԵԱՆ

Ամենայն ՎՊ. Հարց և վարժապետաց սիրալիր ողջոյն: Սենեկիս դրակիցն ալ չմոռնայ au revoir:

7. Նոյ. Լճին կէսն այլ ըմբցաւ, լեռն ալ ելլալով իջնալով անցուեցաւ. ճամբորդութեան վերջն ալ մօտեցաւ, և արդէն ըմբցած կ'ըլլայ՝ երբ հիմակուան գրածս դուք կարդաք: Չորս հինգ օր անցան, որ քիչ ատենէն չորս հինգ շաբաթ պիտի ըլլան, քիչ մ'այլ ատենէն չորս հինգ ամիս և ապա չորս հինգ տարի, որ Ձեր ճամբորդութիւնը կու մօտեցընեն: Այն այլ կու հասնի և կ'անցնի, ինչպէս ձեզմէ առջիններուն: Աղէկ աշխատինք, որ այսչափ անցքերու մէջ անանցելի բարիքն ալ չանցնի ձեռքերէն: Ժամանակը աղէկ կ'թելու է, յաւիտենականութիւն կ'ելլայ: Թիշեցէք երեք աստղերը. յուսամ որ Սերովբէն կորուսած չէ այդ նշանը: Վաղը իր և Միքայէլաց անուան տօնն է. ապահով ըլլան որ զիրենք յիշեմ ուր որ պէտք է: Մնացէք բարեաւ հնազանդութեամբ, ջանիւք, առաքինասիրութեամբ:



Ազնուաց Պարոնայց
Ոստումատեմի Աշակիրտաց Մուրատ. վարժարանի

Ս. Ղազար, 27 Նոյ. 1861

Իմ Սիրասունը հոգէսունը

Երեկ ընդունեցայ Ձեր միաբան գիրը. այսօր ճամբորդ մը գտուելով այդ տեղ երթալով՝ փութացի կարճ գրով մը բարեւ տալ, և ձեր ուրախութեանը զօր կու յայտնէք՝ ուրախակից ըլլալ, այսպէս ամենայն անմեղ և անփնաս կրիցդ ալ հեռուանց հաղորդակից կ'ըլլամ, երբ հրեշտակն ինձի յայտնէ: Նոյնն յայտնեց ինձի որ Ս. Աստուածածնայ ընծայման նախընթաց գիշերը, այսինքն չորեքշաբթի գիշեր

ձեզմէ մէկն ինծի համար մասնաւոր աղօթք է ըրեր, բայց անունը չըսաւ. հիմայ ես ձեզի կու հարցընեմ, ով որ է՝ ինծի իմացընէ:

Գիտնալով որ այլ ինձմէ խրատի կարօտ չէք, բայց ես այլ տեսակ մը սովորութեամբ վարժած եմ այնպիսի բանի, այս անգամ այլ քանի մը կտոր խաւրեմ, զոր դուք այլ փոխանակ ականջի զէպ ի բերան տարէք և անոյշ բաներ իմանալով՝ իմացուցէք, և յօժարութեամբ աշխատեցէք անձանձիր, ողջ մնալով և ամբողջ:



Վերջ՝ Յ. Սրբուհ. — Յ. Տամա. — Յ. Զամ. — Ա. Տեօփէթ. — Կ. Պազիրի. — Մ. Կիւրճեան
Վերջ՝ Ա. Տէրղաւթեան. — Յովհ. Գաւէք. — Յ. Անանեան. — Ա. Տոմինեան

Այնչափ յարգոյ վերակացու վարդապետաց, և վարժապետաց բարեկեան մասնուցէք. ես այլ զձեզ ամէն օր մատուցանելով որու որ գիտէք, միամ

Բարեացակամ

Հ. ՂԵՌՈՆՅ Մ. ԱՆԻՍԻԱՆ



Ս. Ղազար 28 Դեկտ. 1861

Իմ Սիրունք Սանունք մանունք

Շնորհաւոր նոր տարի:

Զեռաց ձրիկները թողլով ուրիշներուն տալ ձեզի, միայն սրտանց և լի սրտանց մաղթեմ ամէնուդ և ամէն մէկերնուդ մտած տարիներդ շնորհալի ըլլալ, և լի շնոր-

հօք ելլալ անկէ, ուրիշ շնորհաւոր տարւոյ և տարիներու մտնելու: Անշուշտ այս նոր տարին ալ հասակնիդ քանի մը մաս պիտի երկընցընէ (թէպէտ Պ. Խօրանաւանճիին բաւական է արդէն) բայց մտքերնիդ քանի՞ կանգուն պիտի երկնայ և լայնայ. սիրտն որչափ աւելի պիտի բարակնայ, հոգին որչափ աւելի պիտի բարձրանայ, — Անշուշտ հիմայ ցուրտ է (կեցած սենեկնիդ չէ), ձմեռ է. այս տարի այլ ունի իր ձիւնը և բուրբ, իր փոթորիկն և մրրիկները. բայց զարուն այլ ունի, թռչուն այլ ունի, ծաղիկ և պտղիկ այլ ունի, Հոգիներուն հեռուն է լսեցէք. ծաղիկը մօտէն քաղեցէք (միայն փշոտ չըլլայ), պտուղը ատենին վայելեցէք, Կ'իմանա՞ք... ատ... ան... ոն... ճի... և ճի:

Վաղը նորէն փեթակը կու բացուի (դասատունն), աշխատեցէք, ջանացէք, շահեցէք. այս է ամենու պարտքն:

Ողջունեցէք ամէն Վ. Վարդապետները, Է. Յովսէփը, Մ. Տամէն, և միւս վարժապետները, և ողջ ու զուարթ եղիք միշտ յանուշահոտ անմեղութեան, որոյ յուսով մնամ

Աղօթարար

Հ. ՂԵՌՈՒՄ Մ. ԱԼԵԿՍԱՆԴՐ
Ո[րդեգիր] Կ[ուսին]

Անշուշտ և լուսանիշ ծառայն եղիկն այլ շատ հաճոյարար ընդունեցայ և դրի աշն գերեզմանին պատկերին վրայ, զոր Պ. Յակոբ Տամատ նկարբեր և ինձ յիշատակ էր թողեր: Յիշուի այդ ծառն՝ Բարիզու ամէն ծառերէն աւելի սիրելի է ինծի:



Ս. Ղազար 4 Մարտի 1862

Իմ սիրելի սանունք, մեծք և փոքունք

Ձեր շնորհաւորութեան թղթերը իմ Պաշտպան Սրբոց տօնին օրը ընդունեցայ և կարդացի հայրական հաճութեամբ. և ինչպէս այն առաւօտն ս. պատարագի ժամանակ, նոյնպէս անկէ ետեւ այլ սրտանց օրհնէնք և այլն այլ աւելցուցի վրանիդ, — Յիշեցէք երեք աստղերը:

Ահա բարեկենդանն լմանաւ, Մեծ պահք է. ժամանակ է յառաջդիմութեան մեծի. բոլոր բնութիւն այս եղանակիս մէջ կ'արթննայ յառաջէ ի զարգացումն. օրինակը կու տեսնէք ձեր աւագանին եզերքը ուռնիներուն վրայ, դուք բնութեան թագաւոր կ'ըսուիք, որչափ աւելի պէտք է փութաց յառաջելու ի մտաւոր զարգացումն. Հող, ջուր, արև բուսոց, ձեզի շնորհք, իմաստութիւն և ջանք: Ասոնցմով յառաջելով հասէք ի սուրբ Յարութիւն, և յետ կոտորելու կարմուկ հաւկիթները՝ ինծի իմացուցէք ջանքերնուդ յաջողիլը: Ինչպէս որ կարգաւ անունիդ շարեր էիք նոյնպէս ակնարկելով ձեզի կ'ողջունեմ ամէն մէկերնիդ. առանձին գիր զրոգաց այլ չունենալով հիմայ ատեն առանձին գրելու, անգամ մ'այլ կ'ողջունեմ, և կու յորդորեմ որ հաստատուն կենան իրենց սուած խոստմանց և յուսոց վրայ:

Ձեր բարի ուրախութեանց և սրտմութեանց հաղորդ ըլլալով, և ողջունելով ամէն վարպետնիդ՝ մնամ

Աղօթարար

Հ. ՂԵՌՈՒՄ Մ. ԱԼԵԿՍԱՆԴՐ
Ո. Կ.

Ս. Ղազար 12 Յունիս 1862

Սիրելի սանունք իմ,

Անցեալ հինգշաբթի առաւօտուն (5 Յունիս) ժամերգութեան առիթն՝ բար քոքր ոտնաձայն մը լսեցի եւ Ե. Յովսէփին քալուածքին նմանցուցի ժամերգութենէն առ միջապէս վերջ պատարագի ելայ, զձեզ այլ յիշելով այն հեզ եւ անմահ գառին առջև, որոյ նման ըլլալ ամէնուս պարտք է, մանաւանդ գառնահասակ սանուցդ պատարագէն դառնալով յաւանդատունն, հոն հանդիպեցայ Ե. Յովսէփին, որ ապա սաւորութիւն ընելէ կու դառնար։ Ժամ մը ետեւ տեսնուեցանք խօսեցանք, ինծի ծրար մը նամակաց տուաւ, զոր առնելով մէկէն նաւակ մտայ սևազգեստ աշակերտաց հետ՝ զորս այն օր ծովուն եզերքը նախահաշելու պատրաստած էինք և այն ընդարձակ կապոյտ ջրերուն եզերքը։ Բանալով ծրարը՝ յանկարծ գտուեցայ ի Բարիզ, Խօսարոս նայեցայ, նոյեմբերի իրեցն էր 1861-ին. ժամ մը ձեզի հետ տեսնուելէն ետեւ, նորէն նայեցայ և տեսայ որ եօթն ամիս անցեր է այն ժամուն միջոց, տարին, ամիսներէն և ուրիշ շատ բաներ այլ փոխուեցին։ Այս փոփոխութիւնը դուք այլ կ'իմացընէք ձեր իմաստասիրական հասարակաց ստորագրեալ թղթին մէջ, պէսպէս կերպով, որոց մէկն այլ է ձեր բարձրագոյն ուսմունքներ սկսիլն։ Աստուծոյ և ձեր ամէն ըսածները լսելէն ետեւ դարձայ նայեցայ այն սիրելի յարաշարժ ընդարձակութեան վրայ, որ փոփոխութեան և անկայուն վիճակի աշխարհաբարձ օրինակ մ'է և սակայն երեսուն տարի է ես այն ափանց վրայ քալեր եմ և կու քալեմ, և միշտ նոյն կերպարանքը կու տեսնեմ իր վրայ, միշտ նոյն հաճութիւն և զուարճութիւն ի սրտիս. արդ ի՞նչ ծովն իսկ այդքան հաստատութիւն և անփոփոխութիւն ունի, որքան աւելի, ըսի, ծովին այս կամ այն կողմը կեցող բարեկամաց և սիրելեաց սիրտք, որք Աստուծով յիրար միացեալ են! — Այսպիսի մտածութիւններ առաջին անգամ չէր որ կ'ընէի. և շատ հեղ առանց երկայնելու այն մտածութեանց մէջ՝ ձեր յիշատակին քանի մը ժամակի խնդիրներ ժողուած եմ այդ ծովեզերքէն, որ հոս իմ պոռպոռներս իմ պոռպոռ—պոռոցներն են, և անոնցմէ աւելի զմայլելի. և յապահով եղիք, որ դեռ շատ հեղ այլ այնտեղ քալելով զձեզ պիտի յիշեմ. և առհաստաչեայ անցեալ և ապագայ և ներկայ մտածութեանց՝ ընդունեցէք այս քանի մը ծովային բերդերը, և քանի մը աւելորդ վարկեաններու մէջ, եթէ գտնէք, մէկ երկու բանիկներ մտածեցէք։

Տարեկան հարցաքննութեանց երկու ամիս մնաց. ձեզ տեսնեմ սիրելիք, որ նախ մօտ եղող և ձեր վրայ անդուլ աշխատող վ. Հարքը խնդացնէք, և ապա զհետաւորքս, և ես առաւել ձեր խիղճը։

Ամենայն ծանօթ վարձպետաց այլ բարեւ ընելով ինծմէ, նաեւ ինձ անծանօթ Արման ընկերակցիդ ողջ կեցէք և ուրախ, և ես եմ բարեացակամ

Հ. ՂԱԶԱՐ Ի. ԱՆՇԱՆԵԱՆ
Ո. Կ.



Առ Ազմիւ զարոնայս
Աշակերտս Մուրատեան Վարձարամի

Ս. Ղազար 12 Յունիս 1863

Իմ սիրելի Սանունք,

Ահա ձեր զրկած թղթին կիսուն վրայ երկու առդ ձգելով՝ կու դարձնեմ ձեզի։ Զեր գիրը չառած այլ գուշակէի և գիտէի որ զիս չէք մոռնար այս շնորհաւոր աւուրց

մէջ այլ յիշելու բարի բարի մաղթանօք, ինչպէս որ ես այլ մաղթեցի ձեզի համար թէ նոյն օրերը, թէ նամակնիդ առած օրս, և թէ հիմայ որ գրեմ, — Աստուած իր ամէն ուզածները կատարէ՝ ձեր վրայ, ձեր համակամութեամբն. ձեր ուզածներէն այլ ի հարկէ արժանատիներն յետք չի թողուր. յուսամ որ իմ խնդրելեացս այլ չէ՛ չըսէ, վասն զի իր փառաց և ձեր օգտին համար են. ինչպէս որ ձեր Յարգելի Վերակացուք և Դաստիարակք այլ կ'աղօթեն և կու սովորեցընեն, Լսեցէք յօժարութեամբ, որ եթէ զժուար այլ կարծութիւն՝ դիւրանան:

Բարեկենդանի պատրաստութիւննիդ կ'իմացընէք. ահա ես ամէնէն առաջ ծափ զարնողն կ'ըլլամ. պրտվօ՛, ձեզ տեսնեմ որ անկէ առջի և վերջի թատերաց մէջ այլ աւելի հանդիսաւոր գտուիք: Այս տարի ես մասնաւոր զրադմունք մը ունենալով՝ պիտի չկարենամ ջատ բարեկենդան ընել. բայց պիտի ջանամ որ գոնէ օր մը կամ ժամ մը ձեզի հետ անցընեմ. Այս յոյսով՝ փնաք բարով, և ընդ իս

Աղօթարար

Հ. ՂԵՐՈՆՅ. Մ. ԱԼԻՇԱՆ

Ո. Կ.



10 Փետր. [18]63 Ս. Ղազար

Իմ Սիրելիք

Պիլիպիւք,

Այս առտու ձեր զաղտուկ ու յայտնի աղօթքը և մաղթանքը ընդունեցայ սիրով սրտով, որուն առհաւատչեայ այս թղթիկս Կը թոցնեմ պատուհանէս՝ բարեկամ հովու մը յանձնելով, և ապահով եմ որ գոնէ դէյէկրաֆի շուտութեամբ հասցընէ Ձեզի, բայց ո՛ւր պիտի ձգէ. զայն դուք իմացուցէք ինձի երբ կ'ուզէք, և հիմայ հաճու. թեամբ Յ. Վերակացուաց խելօքիկ բարեկենդան ըրէք, յիշելով զՁեզ յիշողն

Հ. ՂԵՐՈՆՅ. Մ. ԱԼԻՇԱՆՅԱՆ

Ո. Կ.

Հ. Ալիշան այս նամակին հասցէին տակ աւելցուցած է հետեւեալը. *Par la voie de l'air et de l'éclair*

Vite Vite!



Առ Ազմիւ Գարոնայս Ուսանողս

Մուրատեան վարժարանի


Ս. Ղազար, 5 Յունիսի, 1863

Իմ Սիրելի Սանունք, և Վհիռնածայն Ձագունք

Հոգւոյն Սրբոյ սիրած և դադրած Վերնատունէն՝ հրափետուր թեւերով թռած եկաք մէկ անգամ մ'այլ դաս դաս ճնճեցիք ճոռողեցիք, սիրաբանեցիք սրտաբա.

նեցիք առջև, ես այլ աչք ձեռք յերկինս վերուցած առ նոյն Հոգին՝ օրհնաբանեմ զնա, և դարձեալ յանձնեմ զձեզ այլ զիս այլ ի հովանիս աստուածային և առտուածացուցիչ թևոցն, որով մնայք միշտ, որպէս կ'ըսէք, թարմ և ջերմ սրտիւ յամենայն բարիս:

Ձեր գրին համաձայն վարժարանիդ նուիրակն Պ. Թովմասեանն այլ վկայեց ձեր զգոնութեան և հանդարտութեանը. յորում պէտք է որ այլ աւելի ջանք ընէք յառաջադիմութեան յոր և է մասին կրթութեան. վասն զի մինչդեռ զձեզ կու նկատեմ իբրև ձեր գալտեան առաջին օրը, դիմացս, պզտի մզտի, ճիճի պիճի, պիլիպիլի, մէկ մ'այլ կու տեսնեմ որ մեծցեր աճեր էք, և երեք տարի անցեր է. կրթութեան



ՄԱՐԿԱՆԱԼ ՎԱՐՃԱՐԱՆ Ի ՓԱՐՒՋ.

ժամանակին կէսն անցեր է, թերևս կիսէն այլ աւելի ոմանց համար. աղէկ բռնեցէք ժամանակը. քիչ խօսք, շատ գործք. *il s'en va, il s'en va! le temps: le volage et le voleur!*

Մէջերնիդ մէկուն համար լսեր էի որ դարձեր է իր տունը, հիմայ իմացայ որ հոն է, շատ ուրախացայ. իմ բարեկամս է, փափագիմ որ այնպէս այլ մնայ:

Մասնաւոր բարև կ'ընեմ այն պարոնայց որ նամակով և պատկերով այլ ներկայացան, որոց պատասխանն այլ կու տամ լայն ստեղծ մը:

Նոյնպէս կ'ողջունեմ այն Պարոններն այլ՝ զոր չեմ ճանչնար դիմօք, և որք միաբան ձեռնազրեր էին նամակին. միայն մէկիկ մը կար որ քիչ մը կու ճանչնայի, և նա միայն չէր ստորագրած, որ է Պ. Ալեանաքն. չըլլայ թէ ինձի սրդուդած ըլլայ:

Մ. Տամէին այլ մասնաւոր ողջոյն, ինչպէս որ ես իր ողջոյնները ընդունեցայ.
յուսամ որ ձեզի այլ աղէկ espritով գաղղիարէն շարադրութիւններ ընել տայ:
Ամէնուդ այլ ձեռք տալով մնամ բարեացակամ

Հ. ՂԵՌՈՒՄ. ԱՍԵՆՆԵԱՆ
Ո. Կ.

Խաւրած յիշատակաց նոճույն ճղիկները հաճութեամբ ընդունեցայ, և հանգու-
ցելոյն խաչին վրայ դրի:

Նոյնպէս այլ հաւարուսիկ ընծանիդ ընդունեցայ և յանձնեցի դայեկի մը. եթէ
յաջողի հանել ծածկուած թեւաւորները, աւետիս կու տամ, որ դուք այլ դրօշնիդ
կանգնէք և ուրախանամք:

ԳԵՐԵՁՄԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱԼԻԳԱՆԾ

Քնարը մարմար է հիմայ. լարերը լճու քանդակներ.
Անոր երգերն հըրաշունչ որ մըրկափեւ լըռեցին,
Գեռ կը հնչեն, Աւարայր, դեռ կը հնչեն, զերդ պղինձին
Բաշխող մուրճներ աղամանդ. ձեռքն աստուծոյ մ'ոսկեփեր...

- Ու բանաստեղծն, երբ կ'անցնին ժամերը, բիւր տարիներ,
Իր անիննին կը հսկէ, կը ժպտի բոց իր սրտին
Որ այրեցաւ զերդ բուրվառ՝ օտարութեան ափունքին,
Մինչդեռ խունկէն՝ հայրենի տաճարը միշտ կը լեցուէր...

Եւթ մահուան ձեռքին տակ հանճարեղ գանկն է փշրած,
Միտքն արփածել կը փախչի վիշապափեւ, երկնասլաց,
Միտքն որ ցեղի մը կեանքին եղաւ օրդան հրեղէն...

Եւթ Քրնարն է մարմար, անոր լարերն ունկընդի
Կ'ընեն Քերթողը մեռած յաւերժութեան անպատիւ
Երգին որ միշտ կը յառնէ լըռած անհուն շրջերէն...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱՑ

